

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԻԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2016

12-րդ դասարան

Ա. Աշխատանք բնագրով: (12 միավոր)

- Դուք ինձ ասացե՛ք, ո՛վ գիտուններդ և իմաստուններդ, -ասաց Բողոքիսանը, -ինչո՞ւ է ապրում մարդը, ո՞րն է կյանքի նպատակը, որտեղի՞ց ենք գալիս, ու՞ր ենք գնում, ի՞նչ է տիեզերքը...

Տիրեց անապատային խորին լռություն:

-Դու մեզնից բուր անգամ լավ գիտես, ո՛վ մեծդ Բողոքիսան, արքաների՛ արծիվ, որ երկնքի որդին ես և արևից իջած:

-Եթե չգիտեք, ապա ինչո՞ւ էք գրում և կաճառներում իրար կոկորդ պատռում:

-Անգոր է մարդը՝ ընկերը տիղմում սողացող զեռունների: Ամենայն երևույթ, ամենայն առարկա իր պատճառն ունի և իր հետևանքը. մենք կանգնած ենք պատճառների սանդուղքի մի անհայտ աստիճանի վրա:

Զայրույթից սփրթնած՝ ծառացավ ավագ իմաստունը, թոթվեց ալեհեր բաշը և ասաց.

-Տիեզերքը լցված է արևների ավելի շատ հույլերով, մոլորակների անթիվ երամներով, քան մեծագոր արքայի շտեմարանները:

1. Բացատրե՛ք **տիեզերք** բառի կազմությունը և **տի** արմատի իմաստը: Նշված արմատով գրե՛ք առնվազն երկու բառ:

2. Բացատրե՛ք **կաճառ**, **հույլ** բառերի իմաստները:

3. Որո՞նք են **որդ**, **ըմբոստանալ**, **երեց** բառերի հոմանիշները տեքստում:

4. Գրե՛ք **արև** բառով կազմված այն շրջասությունները, որոնք նշանակում են **բամբակ** և **ճապոնիա**:

5. Տեքստից նշե՛ք այն բառը, որը դարձել է ածական: Ինչ՞ խոսքի մասի է պատկանել տրված բառը և ինչ՞ է նշանակել :

6. **Երամ** բառի նմանողությունը նշե՛ք հետևյալ կենդանիների խմբերը՝ **որսաշների, օձերի, աղվեսների, առյուծների, խոզերի:**

7. Տեքստից գրե՛ք այն բառը, որի մեջ առկա է գրաբարյան նախդիր: Նշե՛ք այդ բառի արմատը:

8. Դու՛րս գրեք այն կոչականները, որոնք գործածված են հողով: Նշե՛ք՝ հողի որ տեսակն է գործածված:

Բ. Բացատրե՛ք՝ << **Ծովը խարազանել**>> թևավոր խոսքի իմաստը և նշե՛ք՝ որտեղից է առաջացել:

(3 միավոր)

Գ. Շարադրություն՝ « Կյանքի ոլորապտույտ ճանապարհներով » վերնագրով (երկու էջի սահմաններում) : (5 միավոր)